# ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

**Սագարյան Ժորա Էդվարդի «Երևանի Հանրապետության հրապարակի հորինվածքային ամբողջականության ապահովման արդի խնդիրները» ատենախոսության մասին, ներկայացված՝ ԺԸ.00.01- «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար՝ ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Կ. Ռ. Ազատյան.**

Ատենախոսությունը կազմված է ներածական մասից, երեք գլուխներից, ընդհանուր եզրակացություններից, հայ և օտար 173 անվանում բովանդակող գրականության ցանկից: Այն ներառում է 131 էջ տեքստային մաս, այդ թվում նաև 16 էջ գրականության հղումներ: Հավելվածը կազմում է 37 էջ:

Ներածությունում ցույց է տրված Երևանի Հանրապետության հրապարակի միջավայրի և բաղկացուցիչ տարրերի կենսունակությունը քաղաքի գոյության վերջին 100 ամյա տարիներին: Այսօր անհետաձգելի է, որ Հանրապետության հրապարակը քննականորեն դիտարկվի տասնամյակների ինտեգրացման հոլովույթում, որը և տվյալ աշխատության արդիականությունն է: Հեղինակին հաջողվել է աղերսներ գտնել ատենախոսության թեմայի, նպատակի, գիտական խնդիների, կիրառված հետազոտական մեթոդների և նորարարական դիտարկումների կայացման միջև, որոնք կազմավորվել են մասնավորից դեպի ընդհանուրը տրամաբանությամբ: Թեման աներկբայորեն դիսերտաբել է: Ներածական մասը ընդամենը կազմում է 6 էջ:

Աշխատության առաջին գլխում՝ «Հրապարակների առաջացման պատմությունը և հորինվածքային ձևավորման առանձնահատկությունները» վերնագրի ներքո միահյուսվել են թեմայի պատմատեսական զարգացման բնութագրումն ու հորինվածքային ժառանգորդական կառուցվածքը, միաձույլ ներկայացված են նաև թեմայի միջազգային զուգահեռները: Առաջին գլուխը, եզրակացությունների հետ ընդամենը կազմում է օրինաչափ 29 էջ:

Երկրորդ գլխում՝ «Երևանի Հանրապետության հրապարակի ձևավորումը և զարգացումը» վերնագրով շարադրվել է Հանրապետության հրապարակի փաստագրական վերլուծությունը: Այստեղ, թեկուզ հակիրճ, կարևոր եմ համարում Երևանի Հանրապետության հրապարակի և Վատիկանի Սբ. Պետրոսի հրապարակի կատարված համեմատությունը: Դիպուկ է Հանրապետության հրապարակի կրկնվող կամարաշարի ստեղծագործաբար զարգացման համեմատությունը Ջովաննի Լորենցո Բերնինիի Սբ. Պետրոսի հրապարակի բոլորաձև սյունշարի հետ: Ընդ որում տվյալ համատեքստում չափազանց շահեկան եմ համարում գլխի եզրակացությունում Հանրապետության հրապարակի Երկրորդ աշխարհամարտի հետագա տարիների զարգացումների հորինվածքային տարեգրության ներմուծումը, որ ընդհանուր աշխատության համար առաջնորդող նշանակության է: Գլուխը եզրակացության հետ ընդամենը կազմում է 37 էջ:

Երրորդ գլուխը վերնագրված է «Երևանի Հանրապետության հրապարակի հորինվածքային ամբողջականության ապահովման արդի խնդիրները և համակառույցի հետագա զարգացման առաջնահերթությունները»: Այն նախորդ գլխի տրամաբանական շարունակությունն է: Ուղղակի այստեղ կիզակետում են վերցվել հայ ճարտարապետության վերափոխման և անկախության տարիների զարգացումները: Ատենախոսության թեմատիկան վերջին տասնամյակների իրականությունն է, որ շարադրված է ճարտարապետական քննադատության ելակետներով: Շահեկան է գլխում բերված նախագծային մրցույթների և գիտաժողովների վավերագրությունը, որ հայկական ժամանակակից ճարտարապետության միջոցառումների նպատակամղվածությունը պարզաբանող նշանակությունն ունի, ներառյալ՝ բովանդակ տարածքների ֆունկցիոնալ անալիզը, կատարված վերակառուցման աշխատանքների պատճառականությունը՝ իրենց լուսավոր և ստվերոտ հորինվածքային մանրամասներով հանդերձ: Ի դեպ հեղինակը վերջիններին տիրապետում է: Հակիրճ, ակնարկվող ենթամասը մի ողջ

հանրագիտարանային աննախադեպ խճանկար հիշեցնող տեղեկատվություն է: Գլխի շարադրանքը եզրակացության հետ կազմում է 36 էջ:

«Ընդհանուր եզրակացություններ և առաջարկություններ»-ում, ինչպես որ նպատակ էր դրված՝ ի մի են բերված Երևանի Հանրապատության հրապարակի պատմական, արդի ու ժամանակակից զարգացումները, որոնք տենտետիվ կերպով ինտեգրացվել են 5 քայլերից կազմված ամբողջականացման պրոցեսի: Այդ թվում են. 1. Հանրապետության հրապարակի ծավալատարածական հորինվածքի ներդաշնակեցման միջոցների (հատկանիշների և օրինաչափությունների) սահմանումը, 2. անսամբլի բաղկացուցիչների մանիպուլացիոն՝ համաչափական, համամասնական բնութագրումը, 3. անսամբլի բովանդակ տարածքների ու փռվածքի շարքերի համեմատումը, 4. համալիրի պատմական, արդի ու ժամանակակից զարգացումների նախագծային համակարգումը, ինչպես նաև՝ 5. ողջ կոմպլեքսի տարածական վալորիզացիան:

Հավելվածի մասում ներկայացված են՝ աշխատության մեթոդական սխեման, միջազգային և հայկական զարգացումների պատկերավոր դասակարգումները, Հանրապետության հրապարակի ընդհանուր և դետալային աղյուսակավորումը, որտեղ միջազգային նորագույն զարգացումների խորքով նկարվել է Հանրապետության հրապարակի վիրտուալ մղումների մեկնաբանությունը:

Սագարյան Ժ. Է.-ի աշխատությունը կարելի է գնահատել որպես պատմատեսական և պրակտիկ հայեցակարգով օրինակելի երկասիրություն: Ատենախոսությունում արհեստավարժ կերպով ի մի են բերվել Երևանի Հանրապետության հրապարակի մասնագիտական տվյալները, վերլուծվել են ՀՀ արդի ճարտարապետության հիմնադրման, հաստատման և վերափոխման ժամանակաշրջանների մորֆոլոգիան, ինչպես նաև 21-րդ դարի առաջխաղացման գործընթացները: Արդյունքում բնութագրվել են ուսումնասիրվող անսամբլի քննական ամբողջացման տենդեցները:

Ներկայացվող աշխատությունը բարձր գնահատելով հանդերձ, բնական է դրանում կան ուղղվող կարգի մի շարք վիճարկելի դիտարկումներ ևս, որոնք կարելի է համարել այս ատենախոսության դրական կողմերից մեկը: Ուղղակի տեղի սղության պատճառով նշվածներից կուզեի մասնավորել հետևյալ երկուսը:

1. Ցանկալի է աշխատությունը հարստացնել հայկական ուշ միջնադարյան և նոր ժամանակաշրջանի քաղաքաշինական նոր զարգացումներով, առանձնապես շեշտը դնելով քաղաքային կենտրոնի կազմում երկհրապարակ համակարգի ձևավորման վրա: Մի հանգամանք, որ ստվերում է թողել Երևանի պրոմենադների իդեան, իր հորինվածքի կենտրոնն ունենալով հենց Հանրապետության հրապարակում. (զուգահեռների համար տես՝ Երզնկա, Սեբաստիա, Գյումրի, Կարս քաղաքները):
2. Որպես թերություն կուզեի նշել, որ աշխատության վերջին գլխի շարադրանքում ժամանակակից գործոնների, գլոբալիզացիայի ու 21-րդ դարի միջավայրային հարցերի ներգրավման պակաս կա: Նկատի ունեմ վերջին տասնամյակներում դրսևորված երկրագնդի կլիմայի գերտաքացման հետևանքով դրսևորված միջավայրի՝ կայունության, էկոլոգիական, ինչպես նաև էներգոկոնսերվատիվ ու կանաչ ճարտարապետության պրոբլեմները: Փաստորեն թվարկածները աշխատության հորինվածքային ամբողջացման խնդիրներում առհասարկ չեն դիտարկվել: Դրանք ի տարբերություն արդի ճարտարապետության, հանդիսանում են ժամանակակից ճարտարապետության վերլուծական նոր հիմնախնդիրներից: Որպես այդպիսին նշվածները՝ այն է միջավայրի կայունության, էկոլոգիայի, կանաչ ճարտարապետության պրոբլեմները այս աշխատության հետագա ընթացքը կարելի է համարել, ուստի կոռեկտության հանգամանքներից ելնելով, գոնե պետք է իրազեկվեին ներածության մեջ՝ ատենախոսության սահմանների մասում:

Ընդհանրացնելով, Սագարյան Ժ. Է.-ի «Երևանի Հանրապետության հրապարակի հորինվածքային ամբողջականության ապահովման արդի

խնդիրները» ատենախոսությունը կայացած գիտական ուսումնասիրություն է: Այն համապատասխանում է ԲԿԳԿ-ի կողմից ատենախոսությունների սահմանված պահանջներին: Սեղմագրում և ատենախոսության կապակցությամբ կատարված 4 հրատարակություններում արտացոլված են աշխատության ողջ դրույթները: Աշխատությունը շարադրված է լակոնիկ և բանիմացությամբ: Գտնում եմ, որ հեղինակը միանգամայն արժանի է ԺԸ.00.01-«Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանին:

**Հաջողության բարեմաղթություններով՝**

ճարտ. դոկտոր, պրոֆեսոր՝ **Դ. Գ. Քերթմենջյան**

Դ. Գ. Քերթմենջյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՃՇՀԱՀ գիտ. քարտուղար,

տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ **Լ. Հ. Լևոնյան**

07.07.2025թ.